55. ԿԱԽԱՐԴ ԱՐԱՊԸ

Կ'ըլլի չ'ըլլի ժամանակով մի էրիկ կնիկ կըլլին։ Իրենք շատ աղքատ կըլլին։ Օրըմ կնիկը կէրթա տներեն կորկոտ, բլղուր կը մորա, գուքա մարդուն կըսե կը.

— Ա՜յ մա՛րդ, գնա՛ մե քիչ մեշեցեն վառելիք բեր, մե ապուր էփենք, տաք տաք ուտենք։

Մարդը կացին կա՛ռնե կը կ'էրթա մեշեն։ Շատ կէրթա, քիչ կ'էրթա ռաստ գուքա կը խոշոր քյութուկիմ։ Կացինը զարնե կը օր մի քանի կտոր փատ կոտրե, մեմա տեսնի կը մե արապ դուրս գոքա ու հարցնե կը.

— Ա՜յ հողածի՛ն, ի՞նչ գուզես։

Մարդը շվարած կ'ըսե կը.— Աղա՛, խեղճ եմ, մեղք եմ, եկեր եմ մե քիչ փատ տանեմ, ապուր էփեմ։

Արապը մեղքնա կը մարդուն վրա, կըսե.

— Ես քեզի անպես մե բանըմ տամ օր թոռեց թոռ ուտես, չի՞ պարպի։ Տա՛ր այս սինին, երբոր ըսես. «Բացվե սեղան, բացվե», ի՞նչ տեսակ կերակուր ուզես պատրաստ կըլլի կը։

Մարդը ուրախությամբ սինին կառնե, տուն գուքա։

Տունը հասնելուն պես, սեղանը բերե կը կըսե.

— Բա՛ցվե սեղանս, բա՛ցվե։

Անմիջապես սեղանին վրա ամեն տեսակ կերակուր ու խմելիք հազըր գըլլի կը։

Մե վախտ կանցնի, մարդ ու կնիկ մտածեն կը թը «փաշային տուն կանչենք»։ Մարդ ղրկեն կը, փաշային տուն կը կանչեն, սինին դնեն կը, կըսե մարդը. «Բացվե սեղանս, բացվե», ամեն տեսակ կերակուրներ պատրաստ գըլլին։ Փաշան փորը կուշտըմ կը կշտացնե։ Շնորհակալություն կը հայտնե ու դուրս դելնե։

Փաշան նախանձելով խեղճ մարդու այդ սինիին վրա, դուզե ձեռնից խլել։ Մարդ ղրկե կը սինին դուզե։ Խեղճ մարդը առանց գիտնալու փաշայի միտքը, սինին կուտա կը, կը տանին։ Էքսի օրը փաշան մե ուրիշ սինիմ ղրկե կը անոր սինիին տեղը։

Իրիկուն հացի նստած վախտը, մարդը կըսե. «Բացվե սեղանս, բացվե», ամա շատ կը զարմանա կը օր կերակուր, բան հազըր չկա, կը հասկնա փաշայի սատանությունը և բանըմ չի կըրնա ընե։

Կանցնի մե վախտ, կենա կաղքատնան, կենա կնիկը իրկան կ'ըսե կը.

— Մա՛րդ, գնա մի քիչ փատ բեր, ապուրմ՝ էփենք ուտենք։

Մա՛րդը կացին կառնե կէրթա անտառը, կը հանդիպի կենա ան քյութուկին, մեկ քանի հատ կացնով զարնե կը, Արապը դուրս գելնե, կ'ըսե.

— Ա՜յ անկո՜ւշտ մարդ, կենա ի՞նչ գուղես։

Մարդը վախնալով կ'ըսե կը.— Աղա՛, սինին փաշան ձեռիցս առավ, կենա մնացինք խեղճ, անտեր։ Խեղճ եմ, մեղք եմ, մե քիչըմ փատ տանեմ։

Արապը կատղած, կը վերցնե մարդուն էշըմ կուտա կը, կըսե.

— Երբոր ըսես. «Չիու, զրոռ», ետնից ոսկի կը թափի։

Մարդը կուրախանա կը, հեծնի կը իշուն վրա, գուքա կը տունը, տունը հասնելուն պես կըսե. «Չիու, զրոռ» ոսկիները կը թափի կը։

Մե օրըմ մարդ ու կնիկ, խելք խելքի կուտան, հեծնին կը էշը, կէրթան կը բաղնիք։ Հանվելու վախտը, համամճին թենպեհ կընեն կը, որ չ'ըլլի թը իշուն «չիո՜ւ, զրոռ» ըսե, վերջը ոսկիները կը թափի։ Համամճին ձեն չի հանե, երոր անոնք ներս կէրթան, համամճին իշուն «չիու, զրոռ» կըսե։ Էշը ոսկիները կը թափե։ Համամճին երոր աս բանը տեսնի կը, խելքը թռցնե կը։ Խապար կէնե կը, մե ուրիշ էշ բերել կուտա և մյուս էշը իրենց տունը ճամբել կուտա կը։

Լողանալեն վերջը, փարա տալու վախտը, մարդը իշուն ինչքան օր «չիու, զրոռ» կէնե, էշը ոսկի չի թափե։ Էրիկ կնիկ էշը կուտան

իրենց լողանալու տեղը, գելնեն դուքան կը։ Կանցնի մե վախտըմ, կենա կաղքտնան։

Կինը կըսե մարդուն.— Գնա ցախ բեր, ապուր էփենք։

Մարդը գելնի կէրթա կենա էն քյութուկին ռաստ դուքա, վախնալով էրկու իրեք կացին կը զարնե, էն Արապը դուրս դուքա կ'ըսե.

— Ա՜յ հողածին, դուն ի՞նչ անկուշտ մարդ ես։— Եվ ամա քիչ մնա կը որ մարդուն ուտե։

Խեղճը կաղաչե կը, պաղատե կը, Արապին հերսը դիշնի կը։ Աս անգամին ալ մե հատ էրկանք կուտա կը, կըսե՝ «ոսկի կաղա»։

Մարդը ուրախ դառնա կը տուն։ Քարերը սարքե կը, կաղա, ոսկի կը թափի։

Մարդը կը զենկիննա, դրկիցները դիմանան, դուքան կը խափեն, կըսեն. «Մեմ ձեր էրկանքը տվեք, տանինք քիչըմ բլղուր աղանք ու բերենք»։ Կը տանին, տեղը ուրիշ էնղերիե քարեր կը բերեն։ Խեղճերը շատ կը դարձնեն, ալ ոսկի չի թափի։

Կենա կաղքտնան կը, վախտըմ կանցնի, կնիկը կենա կըսե.

— Պիտի էրթաս փատ բերելու։

Մարդը այս անգամ ճարը հատած գելնե կ'էրթա քյութուկին քովը, մե կացին կը զարնե, Արապը դուրս գելնե կը, կըսե.

— Ա՜յ անկուշտ հողածին, էդքան բանը քեզի տվի չկշտացա՞ր, կենա՞ էկեր բան գուղես։

Խեղճը կ'ըսե.— Ունեցած չունեցածս ուրիշները պյություն տարան, խեղճ եմ, եկա կտորըմ փատ տանեմ։

Արապի ճարը կտրած, ըսավ.— Աս անգամ ա ասի կոպալը տար, երբոր ըսես. «Կոպա՛լ, ել ու իշի», ոսկի կը թափի։

Մարդը աս անգամ ա ուրախցավ։ Կառնե կը կոպալը, դուքատուն։ Երբոր կըսե. «Կոպա՛լ, ել ու իշի», կոպալը գելնե ու կիշնի իրեն գլխուն լավըմ ծեծե կը։

Մարդը խրատված կառնե կոպալը կէրթա փաշային տունը ու կըսե.

— Փաշա, չըԱի ըսես. «Կոպա՛լ, ել ու իշի», սորա[1] ոսկիները թափին կը։

Փաշան կարծելով, թե սինիին պես է, բիտտեն բիրա կըսե. «Կոպա՛լ, ել ու իշի»։ Կոպալը գելնե կը, կ'իշնի կը էնքան զարնե կը փաշին գլխին, որ փաշան կըսե.

— Ա՜յ, սինիի տերն է եկե, տվեք թող տանի։

Մարդը կառնե սինին, քեֆով քեֆով կը վազե բաղնեպանին

[1] Նաև (Ս. Բ.)։

քով։ Բաղնեպանին կ'ըսե.— Չ'ըլլի թե էսոր ըսես. «Կոպա՛լ, ել ու իշի», սորա ոսկինները կը թափի։

Համամճին գիտնա կը թը, ադ ալ իշու պես է, կըսե. «Կոպա՛լ, ե՛լ ու իշի», էնքան կը զարնե որ համամճին կըսե.— Յամա՜ն, իշուն տերն է եկե, տվեք թող տանի էշը։

Երկանք տանող դրացիին տունը կէրթա, էնկից ալ երկանքը կ'առնե և ուրախ ուրախ տուն դուքա։

Կուտեն կը, խմեն կը, քեֆ կենեն կը։

Երկնքեն իրեք խնձոր իջավ՝ մեկն ասողին, մեկը լսողին, մեկն ալ բոլոր աշխարհին։